

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Ռ.Պետրոսյանը

ք.Հրազդան

26.12.2018թ. ժամը 11.⁰⁰

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

- Վ.Վարդանյան- ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
- Ա.Ավետիսյան- ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
- Լ.Մադոյան- ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
- Լ.Պետրոսյան- ՀՀ Կոտայքի մարզպետարանի գլխավոր քարտուղար
- Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ
- Մարզի խորհրդի անդամ համայնքների ղեկավարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքը:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ.Գուլյան/

2. 2018թ. ընթացքում իրականացված վարչական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփում:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի ՏԻ ԵՎ ՀԳՄ հարցերով վարչության պետ Հ.Ալեքսանյան/

3. Մարզի համայնքներում առկա քաղաքաշինական խնդիրների մասին:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Տ.Գևորգյան/

4. Այլ հարցեր

ԼՍԵՑԻՆ՝

1. ՀՀ Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Գ.Գուլյանի զեկուցումը մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին:

Ձեկուցումն ընդունվեց ի գիտություն./Կցվում է/:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Համայնքների բյուջեն հաստատելուց հետո սեփական եկամուտների հավաքագրման համամասնությունները սահմանված ժամկետներում ներկայացնել մարզպետարան:

2. ՀՀ Կուրսայքի մարզպետարանի ՏԻ ԵՎ ՀԳՄ հարցերով վարչության պետ Հ.Ալեքսանյանի գեկուցումը 2018թ. ընթացքում իրականացված վարչական և մասնագիտական հսկողության արդյունքների մասին:

Ձեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները վարչական և մասնագիտական հսկողության արդյունքում արձանագրված թերությունները և խախտումները վերացնելու և հետագայում բացառելու ուղղությամբ:

3. ՀՀ Կուրսայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Տ.Գևորգյանի գեկուցումը մարզի համայնքներում առկա քաղաքաշինական խնդիրների մասին:

Ձեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:


Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Շահագործման թույլտվությունների տրամադրումից հետո հետևողական լինել շինությունների նպատակային և գործառնական օգտագործումը սեփականատերերի կողմից պահպանման ուղղությամբ:

-Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ համայնքներում ինքնակամ շինությունների հայտնաբերման, օրինականացման, ինչպես նաև հետագայում ապօրինությունները կանխելու և օրենքը շրջանցելու դեպքերը բացառելու ուղղությամբ:

-Ձեռնարկել օրենքով սահմանված միջոցներ կիսակառույց և անավարտ շինությունների հետագա կարգավիճակների հստակեցման ուղղությամբ:

Ամփոփելով մարզի խորհրդի նիստը՝ մարզպետ Ռ.Պետրոսյանը մեկ անգամ ևս ներկայացրեց <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 20 կետերը և առաջարկեց համայնքների ղեկավարներին ձեռնարկել գործուն քայլեր առկա խնդիրներին լուծում փնտրելու և համայնքներում կյանքի որակը բարձրացնելու ուղղությամբ:



Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Զեկույց

Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ

Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման կատարողականը բոլոր հարկատեսակների գծով կատարվել է 93,0%-ով: Նախատեսված 3,718,561.9 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 3,456,922.1 հազար դրամ:

Համեմատելով նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների հետ, այն է՝ 94,3%, համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման կատարողականը բոլոր հարկատեսակները միասին վերցրած տոկոսային հարաբերակցությամբ նվազել է, ինչը բավարար համարել չեմ կարող: Չնայած, որ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի հետ համեմատելիս ավել է հավաքագրվել 292,157.2 հազար դրամով:

Սեփական եկամուտների առաջադրանքը 5 (հինգ) հարկատեսակների գծով /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, պետական տուրքեր, հողի և գույքի վարձակալության վարձավճարներ/ կատարվել են 97.3%-ով: Նախատեսված 2,235,629.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 2,174,485.4 հազար դրամ: Պետք է արձանագրել, որ տարեկան կտրվածքով նախատեսվածի համեմատ առաջադրանքը կատարվել է ոչ լրիվ ծավալով:

Չնայած 5 (հինգ) հարկատեսակների առաջադրանքը կատարվել է 97.3%-ով, բայց կան համայնքներ, որոնց կատարողականը շատ ցածր է և հեռու է բավարար լինելուց:

Այժմ սեփական եկամուտների հավաքագրումը ըստ առանձին հարկատեսակների:

1. Գույքահարկ – Կատարողականը՝ 100.1%: Նախատեսված 1,384,427.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 1,386,066.3 հազար դրամ:

Գույքահարկի գծով առավել ցածր ցուցանիշներ են արձանագրվել Գետամեջ (63.4%), Արզնի (76.7%), Արգել (77.5%), Գեղաշեն (77.5%), Հրազդան(79.6%) և Կաթնաղբյուր (82.3%) համայնքներում:

2. Հողի հարկ - Կատարողականը՝ 89.5%: Նախատեսված 397,713.9 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 355,995.8 հազար դրամ:

Հողի հարկի գծով առավել ցածր ցուցանիշներ են արձանագրվել Գետամեջ (45.2%), Մրգաշեն (49.5%), Քաղսի (56.5%), Նոր Հաճն (58,4%), Պոռչյան (59.9%), Քանաքեռավան (60.2%), Քասախ (68.5%) համայնքներում, որտեղ ցուցանիշները տոկոսային արտահայտությամբ չեն գերազանցում 70.0 տոկոսը, ինչը միանշանակ բավարար արդյունք չէ: